

# Քուոկիկ Ջալալի

Ժամանակի սահմանափակում՝ 2 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 256 MB  
Կշիռը՝ 100 միավոր

## Շարադրանք

Քուոկիկ Ջալալին բացի իր հայտնի կարողություններից նաև կարողանում է խնդիրներ լուծել: Նրա սիրած կայքը CodeHorsesն է: CodeHorsesի մրցույթներում լինում է 8 խնդիր: Քուոկիկը որոշեց հաշվել այն մրցույթների քանակը որոնցում նա լուծել է 1 խնդիր, 2 խնդիր, ..., 8 խնդիր: Պարզվեց  $i$  խնդիր նա լուծել է  $a_i$  մրցույթում: Հետո նա գրեց այդ տվյալները մի թղթի վրա հետևյալ ձևով  $a_1 a_2 \dots a_8$ , ընդ որում ոչ մի բացատանիշ չօգտագործեց և բոլոր  $a_i$  ները գրեց առանց սկզբի 0-ների, եթե  $a_i=0$  ապա այդ քանակը բաց թողեց: Մի օր Քուոկիկին պետք եկան այդ տվյալները և նա գտավ այդ թուղթը, բայց շուտով պարզվեց, որ այդ տվյալները կարելի է մեկնաբանել տարբեր ձևերով: Օգնեք նրան գտնել տարբերակների քանակը  $\text{mod } 10^9+7$ :

## Մուտքային տվյալներ

Տրված է մինչև  $N$  թիվը, որը գրված էր թղթի վրա ( $1 \leq N < 10^{1000000}$ ):

## Ելքային տվյալներ

Արտածեք մեկ թիվ՝ տարբերակների քանակը  $\text{mod } 10^9+7$ :

## Օրինակ

Մուտք	Ելք
213458	5

## Բացատրություն

Այս թիվը կարելի է մեկնաբանել որպես

21345 հատ 8

213 հատ 4 և 5 հատ 8

2 հատ 1, 3 հատ 4 և 5 հատ 8

2 հատ 1 և 345 հատ 8

21 հատ 3 և 45 հատ 8

## Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 0 (**0 միավոր**) Օրինակները,
- Ենթախնդիր 1 (**30 միավոր**)  $1 \leq N < 10^{10}$ ,
- Ենթախնդիր 2 (**30 միավոր**)  $1 \leq N < 10^{1000}$ ,
- Ենթախնդիր 3 (**40 միավոր**)  $1 \leq N < 10^{1000000}$ :